Երաշխավորված է
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
---- ---------- 20 **թիվ**------- **հրամանով**
հիմք՝ Ուսուցման ազգային հիմնադրամի ----- ---------- 20 **թիվ** ----
մասնագիտական եզրակացությանը

Մասնագիտության (զբաղմունքի, աշխատանքի) անվանումը Հաշվապահ

Լրացուցիչ կրթական ծրագրին մասնակցության մուտքային պահանջներ Չի նախատեսվում

Լրացուցիչ կրթական ծրագրով նախատեսված զբաղմունքի նկարագրությունը՝ ըստ պատվերի նպատակադրման
Այս մոդուլի նպատակն է մասնակցի մոտ ձևավորել մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, դրանք մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու հմտություններ: Մոդուլի ավարտին մասնակիցը կիրականացնի կազմակերպության ֆինանսական գործառնությունների ամբողջական հաշվառում՝ գլխավոր հաշվապահի անմիջական ղեկավարությամբ, սկզբնական հաշվապահական փաստաթղթեր նախապատրաստում, ֆինանսական հաշվետվությունների կազմում, դրամական վճարումներին, մուտքերին և ֆինանսական այլ գործառնությունների վերաբերող փաստաթղթերը կազմում, հաշվապահական գործառնությունների իրականացում, կտիրապետում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերի՝ Excel, 1C, ՀԾ:

Առաջարկվող ծրագրի ավարտին մասնակիցների կողմից ձեռք բերվող ուսումնառության արդյունքներ
1) Հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ընթացակարգերը:
2) Փաստաթղթավորում և հաշվապահական հաշվառման վարում:
3) Հիմնական միջոցների և պաշարների հաշվառում:
4) Դրամական միջոցների հաշվառում, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառում:
5) Սեփական կապիտալ, «Եկամուտների և ծախսերի հաշվառում»:
6) Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառման մեջ. Excel, 1C, ՀԾ ծրագրեր:

ԼԿԾ ամփոփիչ գնահատման մեթոդը
Ծրագրով սահմանված յուրաքանչյուր մոդուլի համար կազմակերպվում է տվյալ ծրագրի կատարման չափանիշները ընդգրկող ամբողջական առաջադրանք, որով հնարավոր կլինի փաստացի դիտարկել ձեռք բերված ուսումնառության արդյունքները գործնականում կիրառելու աշխատանքային հմտությունները:

Ծրագրի տևողությունը, բեռնվածության ծավալը՝ 3 ամիս, 350 ժամ

Ուսումնական խումբ՝ լսարանային՝ մինչև 10 մասնակից, գործնական աշխատանքային՝ մինչև 10 մասնակից

Իրականացնող կազմակերպությունը՝ ՀՀԿԳՄՍՆ «Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ2 պետական քոլեջ» ՊՐԱԿ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՀԱՇՎԱՊԱՀ	
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է մասնակցի մոտ ձևավորել մասնագիտական ոլորտի վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ, դրանք մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու հմտություններ: Մոդուլի ավարտին մասնակիցը կիրականացնի կազմակերպության ֆինանսական գործառնությունների ամբողջական հաշվառում՝ գլխավոր հաշվապահի անմիջական ղեկավարությամբ, սկզբնական հաշվապահական փաստաթղթեր նախապատրաստում, ֆինանսական հաշվետվությունների կազմում, դրամական վճարումներին, մուտքերին և ֆինանսական այլ գործառնությունների վերաբերող փաստաթղթերը կազմում, հաշվապահական գործառնությունների իրականացում, կտիրապետի հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերի՝ Excel, 1C, ՀԾ:
Մոդուլի տևողությունը	350 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 150 ժամ գործնական պարապմունք՝ 200 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
ՈՒսումնառության արդյունքներ	Մոդուլով սահմանված ուսումնառության արդյունքները ձեռք բերելու արդյունքում, մասնակիցը պետք է՝ 1) Հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ընթացակարգերը: 2) Փաստաթղթավորում և հաշվապահական հաշվառման վարում: 3) Հիմնական միջոցների և պաշարների հաշվառում: 4) Դրամական միջոցների հաշվառում, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառում: 5) Սեփական կապիտալ, «Եկամուտների և ծախսերի հաշվառում»: 6) Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառման մեջ. Excel, 1C, ՀԾ ծրագրեր:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
ՈՒսումնառության արդյունք 1	Հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ընթացակարգեր:

Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու կապիտալը 2) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվեկշռի կառուցվածքը, դերն ու նշանակությունը, 3) ճիշտ է ներկայացնում տնտեսական գործառնությունների հետևանքով հաշվապահական հաշվեկշռումտեղի ունեցող փոփոխությունները, 4) ճիշտ է տարբերակում ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվները, 5) ճիշտ է ներկայացնում կրկնակի գրանցման կարևորագույն գործառույթները՝ ստուգողական և ճանաչողական նշանակությունը, 6) ճիշտ է ձևակերպում պարզագույն տնտեսական գործառնությունների հաշվային թղթակցությունները, 7) ճիշտ է կատարում գրանցում հաշվապահական հաշիվներում, 8) ճիշտ է որոշում հաշվապահական հաշիվների մնացորդները և հաշիվներով կազմում շրջանառության տեղեկագիր: 9) ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, 10) ճիշտ է տարբերակում հաշվապահական հաշիվներն ըստ տնտեսական բովանդակության, դասերի, խմբերի, առաջին և երկրորդ կարգերի, 11) ճիշտ է օգտվում հաշվային պլանից, ձևակերպում տնտեսական գործառնությունների հաշվապահական թղթակցություններ, 12) ճիշտ է ներկայացնում արտահաշվեկշռային հաշիվների դերը հաշվապահական հաշվառման համակարգում: 13) ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի դասակարգումը, 14) ճիշտ է ներկայացնում սկզբնական փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները, փաստաթղթերի ժամանակին և ամբողջական ձևակերպումը, հայտնաբերված սխալների ուղղման կարգը, 15) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման գրանցամատյանները, 16) ճիշտ է փոխկապակցում փաստաթղթային շրջանառությունը հաշվապահական գրանցամատյանների հետ, 17) ճիշտ է իրականացնում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ստուգումը և կատարված սխալ գրանցումների ուղղում, 18) ճիշտ է կատարում փաստաթղթերի և գրանցամատյանների արխիվացում: 19) ճիշտ է ներկայացնում սինթետիկ և անալիտիկ հաշվառման համակարգերը, 20) ճիշտ է ներկայացնում սինթետիկ և անալիտիկ հաշվառման տեղեկատվության փոխադարձ կապը, 21) ճիշտ է ամփոփում անալիտիկ հաշիվների մնացորդները և հանրագումարային արժեքով համադրում համապատասխան սինթետիկ հաշվի մնացորդի հետ: 22) ճիշտ է ներկայացնում ակտիվների և պարտավորությունների գույքագրման դրդապատճառները, 23) ճիշտ է ներկայացնում գույքագրման գործառույթները հաշվապահական հաշվառման տեղեկատվության արժանահավատության գնահատման ոլորտում, 24) ճիշտ է ներկայացնում գույքագրման տեսակները և ըմբռնում է գույքագրման հանձնաժողովների ձևավորման սկզբունքները, 25) ճիշտ է ամփոփում գույքագրման արդյունքները և կազմում գույքագրման, համեմատական տեղեկագրեր:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Մասնակցից կպահանջվի տրված ակտիվների և պասիվների խմբավորման միջոցով կազմել հաշվապահական հաշվեկշիռ, որի վրա ներկայացնում է հաշվեկշռային փոփոխությունների տեսակները և բնութագրում յուրաքանչյուր փոփոխության տեսակը:

	Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝ "ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվները, "ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունները, "սեփական կապիտալի բաժինները: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե մասնակիցը հիմնականում ճիշտ է կատարում առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ցուցումներ ակտիվների և պարտավորությունների գույքագրման ընթացակարգի և արդյունքների ամփոփման վերաբերյալ: Գույքագրման նորմատիվ-իրավական փաստաթղթեր, տեղեկատու ն|ութեր, հարդաշաղերի օրինակներ, հաշվապահական հաշվառման խնդիրների ժողովածու
ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 30 ժամ գործնական պարապմունք՝ 30 ժամ
ՈՒսումնառության արդյունք 2	Փաստաթղթավորում և հաշվապահական հաշվառման վարում:
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում, «փաստաթղթավորում», «փաստաթղթային հաշվառում», «փաստաթղթային հաշվառում և փաստաթղթաշրջանառություն», «հաշվապահական հաշվառման փաստաթուղթ», հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի տեսակները, 3) ճիշտ է դասակարգում հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, 4) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր և լրացուցիչ վավերապայմանները, հաշվապահական հաշվառման փաստաթղթերում ստորագրության իրավունք ունեցող անձանց, 5) ճիշտ է ներկայացնում սկզբնական հաշվառման փաստաթղթերի ստուգման եղանակները, 6) ճիշտ է բացատրում հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում կատարված սխալ գրանցումների ուղղման սրբագրական, ճշտանցմւսն, լրացուցիչ ձևակերպման եղանակները, 7) ճիշտ է բնութագրում առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, 8) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի արխիվացման գործընթացը: 9) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման վարման համակարգի ընդհանուր բնութագիրը, 10) ճիշտ է ներկայացնում ֆինանսատնտեսական գործառնությունների գրանցման մայրմատյանային ձևով հաշվապահական հաշվառում վարելու համար կիրառվող գրանցամատյանների օրինակելի ձևերը, բովանդակությանը, նշանակությունը, 11) ճիշտ է ներկայացնում մեմորիալ-օրդերային ձևով հաշվապահական հաշվառում վարելու համար կիրառվող գրանցամատյանների օրինակելի ձևերը, բովանդակությունը, նշանակությունը, 12) ճիշտ է ներկայացնում միևնույն պայմանական կազմակերպության օրինակի վրա հաշվապահական հաշվառման վարումը, 13) ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման վարման կոնկրետ ձևի ընտրության չափանիշները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Մասնակցին կտրվեն հարցեր փաստաթղթավորում, փաստաթղթային հաշվառում, փաստաթղթային ներկայացում,

	փաստաթղթաշրջանառություն, հաշվապահական հաշվառման փաստաթուղթ հասկացությունների վերաբերյալ, փաստաթղթերի դասակարգման և ճիշտ կազմելու վերաբերյալ, կտրվեն հարցեր հաշվապահական հաշվառման համակարգի, ֆինանսատնտեսական գործառնությունների գրանցման մայրմատյանային և մեմորիալ-օրդերային ձևով հաշվապահական հաշվառում վարելու վերաբերյալ: Գործնական առաջադրանքի ժամանակ մասնակցին կհանձնարարվի առաջադրվող տվյալներով կազմել համապատասխան փաստաթղթեր և ներկայացնել նրանց ստուգման եղանակները: Կհանձնարարվի գրանցամատյաններում թույլ տրված սխալների ուղղումը կատարել սրբագրական, ճշտանցման և լրացուցիչ գրանցման եղանակներով: Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝ (փաստաթղթերի ստուգման եղանակները՝ ըստ ձևի, ըստ էության և թվաբանորեն, (գրանցամատյաններում սխալների ուղղման եղանակները՝ սրբագրական, ճշտանցման, լրացուցիչ գրանցման: Գործնական առաջադրանքի ժամանակ կներկայացվի պայմանական կազմակերպության օրինակի վրա հաշվապահական հաշվառման վարումը մեմորիալ-օրդերային և մայրմատյանային ձևով, մասնակցին կհանձնարարվի բնութագրել դրանց տարբերությունները, առավելությունները և թերությունները: Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝ (հաշվապահական հաշվառման վարման մեմորիալ-օրդերային ձևով հաշվառում վարելու կարգը, (գրանցման մայրմատյանային ձևով հաշվառում վարելու կարգը: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե մասնակիցը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համապատասխան հաշվապահական սկզբնական փաստաթղթեր և գրանցամատյաններ (դրամարկղային գիրք, վաճառքի գիրք և այլն:) Տեղեկատու նյութեր, հարցաշարերի օրինակներ, հաշվապահական հաշվառման խնդիրների ժողովածու:
ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 30 ժամ գործնական պարապմունք՝ 30 ժամ
ՈՒսումնառության արդյունք 3	Հիմնական միջոցների և պաշարների հաշվառում:
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ստանդարտի գործողության ոլորտը, 2) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցները, ճիշտ է բնութագրում նյութական ակտիվների դասակարգումը, 3) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների դասերը: 4) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների մուտքագրման Փաստաթղթերը, դրանց կազմման և հաշվապահությունում պահելու կարգը, 5) ճիշտ է կազմում մուտքի սկզբնական փաստաթղթերի հիման վրա հիմնական միջոցների գույքային հաշվառման քարտերը,

	6) ճիշտ է կազմում սկզբնական փաստաթղթերի հիման վրա հիմնական միջոցների մուտքի ձևակերպումները: 7) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների մաշվածությունը կոնկրետ օրինակներով, 8) ճիշտ է հաշվում հիմնական միջոցների մաշվածությունը կոնկրետ օրինակներով, 9) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը և մնացորդային արժեքը, 10) ճիշտ է կատարում մաշվածության արժեքի հաշվարկը: 11) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների օտարումը, 12) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների դուրսգրման փաստաթղթային ձևակերպումները, 13) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների եքի հաշվառումը: 14) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների գույքագրման նշանակությունը, 15) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների գույքագրման կանոնակարգը, 16) ճիշտ է կատարում հիմնական միջոցների գույքագրման համեմատական տեղեկագրերի կազմում և արդյունքների ամփոփում: 17) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների հետ կապված տնտեսական գործառնությունները, դրանց փաստաթղթավորումը, 18) ճիշտ է լրացնում հիմնական միջոցների հետ կապված սկզբնական հաշվառման փաստաթղթերը, 19) ճիշտ է ներկայացնում հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման հաշիվները և հիմնական միջոցների հետ կապված տնտեսական տիպային գործառնությունների գծով պարզ թղթակցությունները, 20) ճիշտ է կատարում հիմնական միջոցների հաշվառման սկզբնական փաստաթղթերի տվյալների գրանցումը համապատասխան մատյաններում և հաշվառման հաշիվներում, 21) ճիշտ է պատրաստում հիմնական միջոցների շարժի հաշվապահական հաշվետվություններ, 22) ճիշտ է ներկայացնում պաշարներ սահմանման, դասակարգման և գնահատման սկզբունքները, 23) ճիշտ է ներկայացնում պաշարների կազմը և դրանց բաղկացուցիչները: 24) ճիշտ է ներկայացնում նյութերի ձեռքբերման տարբերակները և գնահատման մոտեցումները, 25) ճիշտ է ներկայացնում անավարտ արտադրության և պատրաստի արտադրանքի հաշվառման մոտեցումները, 26) ճիշտ է ներկայացնում ապրանքների հաշվառման առանձնահատկությունները մեծածախ և մանրածախ առևտրում: 27) ճիշտ է ներկայացնում արտադրանքի և այլ ակտիվների ստեղծման նպատակով օգտագործված պաշարների ծախսագրումը, 28) ճիշտ է ներկայացնում պաշարների ինքնարժեքը, ինքնարժեքի չափման մեթոդները, 29) ճիշտ է ներկայացնում պաշարների հետ կապված հիմնական տնտեսական գործառնությունները, դրանց փաստաթղթավորումը,

	30) ճիշտ է կազմում և լրացնում պաշարների հետ կապված սկզբնական հաշվառման փաստաթղթերը, 31) ճիշտ է ներկայացնում պաշարների հաշվապահական հաշվառման հաշիվները և պաշարների հետ կապված տնտեսական տիպային գործառնությունների գծով պարզ թղթակցությունները, 32) ճիշտ է կատարում պաշարների հաշվառման սկզբնական փաստաթղթերի տվյալների գրանցում համապատասխան գրանցամատյաններում և հաշվապահական հաշիվներում, 33) ճիշտ է ներկայացնում պաշարների գույքագրման գործընթացը, փաստաթղթավորումը և արդյունքների ամփոփման կարգը, 34) ճիշտ է պատրաստում պաշարների շարժի հաշվապահական հաշվետվություններ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, որն իր մեջ կներառի հարցադրումներ հիմնական միջոցների սահմանման դասակարգման և գնահատման վերաբերյալ, հիմնական միջոցների մուտքագրման փաստաթղթերը կազմելու և հաշվապահությունում պահելու կարգի վերաբերյալ, հիմնական միջոցների օտարման և ելքի գործառույթների վերաբերյալ, հիմնական միջոցների գույքագրման նշանակության, կանոնակարգի և արդյունքների ամփոփման վերաբերյալ: Հարցադրումների մեջ կներառվեն հարցեր սկզբնական արժեքի բաղադրիչների, իրական արժեքով գնահատման անհրաժեշտության, հաշվեկշռային արժեքի որոշման վերաբերյալ: Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝ (ըստ ստանդարտի հիմնական միջոցների սահմանումը, (հիմնական միջոցների դասակարգումը, (հիմնական միջոցների արժեքային գնահատումը: Գործնական աշխատանքի ժամանակ մասնակիցը պետք է կազմի մուտքի համապատասխան փաստաթուղթը, որի հիման վրա կազմի համապատասխան հաշվապահական ձևակերպումներ: Տրված տեղեկատվության հիման վրա մասնակիցը պետք է կազմի մաշվածության գումարի հաշվարկ տարբեր մեթոդներով: Հաշվարկի հիման վրա պետք է կազմի համապատասխան հաշվապահական ձևակերպումները: Գործնական առաջադրանքի տվյալներով մասնակիցը պետք է կազմի հիմնական միջոցների համեմատական տեղեկագիր և ամփոփի գույքագրման արդյունքը: Ինչպես նաև տրված տեղեկատվության հիման վրա մասնակիցը պետք է կազմի հիմնական միջոցների հետ կապված հիմնական փաստաթղթեր՝ կազմի տիպային պարզ հաշվային թղթակցությունները և տվյալները գրանցի համապատասխան գրանցամատյաններում և հաշվապահական հաշիվներում: Պատրաստում է հիմնական միջոցների շարժի հաշվապահական հաշվետվություններ: Մասնակիցը պետք է կարողանա ճիշտ սահմանել, թե որ ակտիվներն են համարվում պաշաղները, պետք է կարողանա տարբերել նյութեր անավարտ արդատրություն, արտադրանք, ապրանքներ հասկացությունները և դրանց բաղկացուցիչները: Կարողանում է ճիշտ ներկայացնել պաշարների գնահատման կարգը և ինչպես է որոշվում իրացման զուտ արժեքը: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե մասնակիցը թեստային առաջադրանքը հիմնականում ճիշտ է կատարում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, թեմայի հետ կապված համապատասխան փաստաթղթեր: Մեթոդական ցուցումներ

	գործնական աշխատանքի վերաբերյալ, տեղեկատու նյութեր, հաշվապահական հաշվառման խնդիրների ժողովածու:
ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 30 ժամ գործնական պարապմունք՝ 30 ժամ
ՈՒսումնառության արդյունք 4	Դրամական միջոցների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անկանխիկ հաշվարկների ձևերը, դրանց կիրառությունը և իրականացման կարգը, 2) ճիշտ է ներկայացնում կանխիկ հաշվարկների կիրառությունը, դրամարկղային գործառնությունների իրականացման 3) ճիշտ է լրացնում դրամարկղային գործառնությունների սկզբնական հաշվառման փաստաթղթերը, 4) ճիշտ է կազմում վճարման հանձնարարականներ, լրացնում կանխիկի ստացման բանկային չեկային գրքույկ, բանկային հաշվից քաղվածքի հիման վրա ներկայացնում իրականացված գործարքները, 5) ճիշտ է ներկայացնում դրամարկղային միջացների հաշվապահական հաշվառման հաշիվները և դրանց հաշվառման հետ կապված տիպային թղթակցությունները, 6) ճիշտ է պատրաստում դրամական միջոցների շարժի հաշվապահական հաշվետվությունները 7) ճիշտ է ներկայացնում դեբիտորական, կրեդիտորական պարտքերի դասակարգումն ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների, 8) ճիշտ է ներկայացնում դեբիտորական, կրեդիտորական պարտքերի հաշվային բաղադրիչները, ճիշտ է ներկայացնում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ճանաչումը, չափումը և ապաճանաչումը, 9) ճիշտ է ներկայացնում դեբիտորական, կրեդիտորական պարտքերի ձևակերպման և դուրսգրման պայմանները: 10) ճիշտ է ներկայացնում այն հիմնական տնտեսական գործառնությունները, որոնց արդյունքում ձևավորվում են դեբիտորական և կրեդիտորական պարտքերը և դրանց խմբավորումն ըստ տնտեսական գործառնությունների բնույթի, 11) ճիշտ է կազմում և լրացնում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հետ կապված սկզբնական հաշվառման փաստաթղթերը, 12) ճիշտ է ներկայացնում անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման հաշվառումը, 13) ճիշտ է ներկայացնում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվապահական հաշվառման հաշիվները և դրանց հաշվառման հետ կապված տիպային թղթակցությունները, 14) ճիշտ է կատարում դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառման սկզբնական փաստաթղթերի տվյալների գրանցումը համապատասխան գրանցամատյաններում և հաշվապահական հաշիվներում,
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, որն իր մեջ կներառի հարցադրումներ անկանխիկ հաշվարկների ձևերի, դրանց կիրառության և իրականացման կարգի, կանխիկ հաշվարկների կիրառության և դրամարկղային գործառնությունների իրականացման կարգի վերաբերյալ: Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝ (անկանխիկ հաշվարկների էությունը, կիրառությունը, (վճարային հանձնարարագրով իրականացվող հաշվարկները, (դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը՝ դրամի մուտքը դրամարկղ և ելքը դրամարկղից: Արդյունքի

	յուրացումը կհամարվի դրական, եթե մասնակիցը պատասխանի թեստում պարունակողհարցերին: Մասնակցին կտրվի նաև գործնական առաջադրանք, ըստ որի տրված տեղեկատվության հիման վրա պետք է լրացնի դրամարկղի մուտքի և ելքի օրդերներ, վճարային տեղեկագիր, առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվություն, կատարի գրանցումներ դրամարկղային գրքում, լրացնի վճարման հանձնարարականներ, բանկի հաշվարկային հաշվից քաղվածքի հիման վրա, մեկնաբանի իրականացված գործարքները: կրացված փաստաթղթերի հիման վրա մասնակիցը պետք է կազմի հաշվապահական ձևակերպումներ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե մասնակիցը կատարել է առաջադրված հանձնարարությունը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, դրամական գործառնությունների համապատասխան հաշվապահական փաստաթղթեր: Տեղեկատու նյութեր, մեթոդական ցուցումներ գործնական աշխատանքի վերաբերյալ, հաշվապահական հաշվառման խնդիրների ժողովածու:
ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական պարապմունք՝ 20 ժամ
ՈՒսումնառության արդյունք 5	Եկամուտների և ծախսերի հաշվառում սեփական կապիտալի:
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում աշխատավարձի ձևավորման և վճարման ձևերը, 2) ճիշտ է հաշվում աշխատավարձ, 3) ճիշտ է ներկայացնում աշխատավարձից կատարվող նվազեցումները, 4) ճիշտ է հաշվարկում արձակուրդային, վերջնահաշվարկ, անաշխատունակության թերթիկով վճարումը, 5) ճիշտ է ներկայացնում եկամուտների և ծախսերի հետ կապված հիմնական տնտեսական գործառնությունները և դրանց փաստաթղթավորումը 6) ճիշտ է կազմում աշխատավարձի հաշվարկային տեղեկագիրը, աշխատավարձի, արձակուրդային հաշվարկի, անաշխատունակության թերթիկով վճարումների հետ կապված պարզ թղթակցությունները, 7) ճիշտ է կազմում աշխատավարձի վճարային տեղեկագիրը, 8) ճիշտ է ներկայացնում սեփական կապիտալի բաղադրիչները, 9) ճիշտ է ներկայացնում կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալը, 10) ճիշտ է ներկայացնում բաժնետիրական կապիտալի տարրերը կազմող հասարակ և արտոնյալ բաժնետոմսերի անալիտիկ հաշվառման գրանցամատյանները: 11) ճիշտ է ներկայացնում եկամուտ և ծախս հասկացությունները, բերում կոնկրետ օրինակներ, 12) ճիշտ է ներկայացնում գործառնական և ոչ գործառնական գործունեությունից եկամուտները և ծախսերը, 13) ճիշտ է կազմում, լրացնում և կիրառում եկամուտների ու ծախսերի հաշվառման հետ կապված բոլոր սկզբնական

	փաստաթղթերը, 14) ճիշտ է ներկայացնում սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի հաշվապահական հաշվառման հաշիվները և դրանց հետ կապված տնտեսական գործառնությունների գծով պարզ թղթակցությունները, 15) ճիշտ է ներկայացնում չվճարված կապիտալի և հետ գնված բաժնետոմսերի հաշվառումը, 16) ճիշտ է գրանցում եկամուտների և ծախսերի հաշվառման հետ կապված սկզբնական փաստաթղթերը համապատասխան գրանցամատյաններում և հաշվապահական հաշիվներում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Մասնակցին կտրվի գործնական առաջադրանք, որի տվյալներով պետք է լրացնի պահանջվող փաստաթուղթ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հետ կապված, ըստ որի կազմի համապատասխան հաշվապահական ձևակերպումը: Պետք է ներկայացնի անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրման հաշվառումը: Պետք է կազմի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվապահական հաշվառման հաշիվների գծով տիպային թղթակցությունները և գրանցի հաշիվներում և պատրաստի պարտքերի շարժի հաշվապահական հաշվետվություն: Ստորև ներկայացվում է արդյունքի ծրագրային մանրամասները՝ (դեբիտորական և կրեդիտորական պարտքերը ձևավորող հիմնական տնտեսական գործառնություններ, (դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հետ կապված սկզբնական հաշվառման փաստաթղթեր, (դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվապահական հաշիվները: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե մասնակիցը հիմնականում ճիշտ է կատարում առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, թեմայի հետ կապված համապատասխան փաստաթղթեր: Մեթոդական ցուցումներ գործնական աշխատանքի վերաբերյալ, տեղեկատու նյութեր, հաշվապահական հաշվառման խնդիրների ժողովածու:
ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 30 ժամ գործնական պարապմունք՝ 30 ժամ
ՈՒսումնառության արդյունք 6	Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառման մեջ. Excel, ՀԾ, 1C ծրագրեր:
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ձեռքով տարվող համակարգից համակարգչայնացված համակարգին անցնելու հնարավորությունները, 2) ճիշտ է ներկայացնում հաշվառումն իրականացնելիս համակարգչի առավելությունները և թերությունները, համակարգչային համակարգի օգտակարությունը: 3) Ներկայացնում է էլեկտրոնային աղյուսակների կիրառությունը հաշվապահական հաշվառման մեջ 4) Ներկայացնում է Microsoft Excel ծրագրի պատուհանի կառուցվածքը, նոր թղթապանակների ստեղծում և պահպանում 5) կազմում է սյրյուսյսյկ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ 6) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում 7) Ներկայացնում է հաշվարկների կատարման մեխանիզմը 6x061 կիրառական ծրագրում՝ թվաբանական և

	տրամաբանական ֆունկցիաներ 8) ստեղծում է հաշվապահական ձևաթղթեր հաշվարկային տարրերով 9) կատարում է տոկոսների հաշվարկման և համեմատության ֆունկցիաներով առաջադրանքներ 10) Ստեղծում է աշխատավարձից պահումների հաշվարկման համար աղյուսակ 11) հաշվարկում է աշխատավարձ ստեղծված աղյուսակի հիման վրա 12) ճիշտ է կատարում տվյալների դասակարգում՝ ՏՕԳ7 13) ճիշտ է կատարում տվյալների ֆիլտրում՝ էմէօր 14) ճիշտ է կատարում աղյուսակային տվյալների ամփուիում՝ ենթագումարների ստանում է 15) ճիշտ է կառուցում ամփոփ աղյուսակ տվյալների հիման վրա 16) Կատարում է կատարված աշխատանքի նախապատրաստում և տպագրում 17) տիրապետում է հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգերով աշխատելու հմտություններին 18) Ներկայացնում է հաշվապահական հաշվառման վարման «ՀԾ» ավտոմատացված համակարգը 19) Հաշվապահական հաշվառման «ՀԾ» ավտոմատացված համակարգի մոդուլները և կիրառման բնագավառները 20) Ներկայացնում է «ՀԾ»–ի «Հաշվետար» մոդուլը, նախնական փաստաթղթերի ստանում է և կուտակում 21) Կատարում է կազմակերպության տվյալների գրանցում մոդուլում, 22) Ստեղծում «Հաշվային պլան», «Բանկեր», «Գործընկերներ», «Գնացուցակ» տեղեկատուներ 23) Ստեղծում, խմբագրում և տպագրում է նախնական փաստաթղթեր. «Վճարային հանձնարարագիր», «Հաշիվ ապրանքագիր» «Գրամարկղի մուտքի-ելքի օրդերներ» 24) Կատարում է հաշվետվությունների ստանում է՝ շրջանառություն, մնացորդներ, 7-հաշիվներ 25) Ներկայացնում է «ՀԾ»–ի «Հաշվապահ» մոդուլը, դրա նշանակությունը 26) Ներկայացնում է «ՀԾ»–ի «Հաշվապահ» մոդուլի «Հաշվապահություն»ենթահամակարգը 27) Կատարում է «Հաշվապահություն» ենթահամակարգի տեղեկատուների ստեղծում՝ նյութական արժեքների տեղեկատուներ 28) Կատարում է «Հաշվապահություն»ենթահամակարգի տեղեկատուների ստեղծում՝ աշխատակիցների տեղեկատուներ 29) Կատարում է «Հաշվապահություն»ենթահամակարգի տեղեկատուների ստեղծում՝ գործընկերների տեղեկատուներ 30) Կատարում է «Հաշվապահություն»ենթահամակարգի տեղեկատուների ստեղծում՝ նյութական արժեքների և պաշարների հաշվետվություններ 31) Ստեղծում է Ֆինանսական և այլ հաշվետվություններ 32) Ներկայացնում է «ՀԾ»–ի «Հաշվապահ» մոդուլի «Աշխատավարձ» ենթահամակարգը՝ տեղեկատուների ստեղծում 33) Կատարում է «Աշխատակիցներ» խմբի տեղեկատուների ստեղծում, խմբագրում

	34) Ստանում է աշխատավարձի հաշվարկ՝ հաշվետվություններ 35) Ստանում է եկամտահարկի և սոցապահովության հաշվետվություններ 36) Ներկայացնում է «ՀԾ»–ի «Հաշվապահ» մոդուլի «Հիմնական միջոցներ» ենթահամակարգը 37) Կատարում է կազմակերպության հիմնական միջոցների տեղեկատուների ստեղծում և խմբագրում 38) Ստանում է հիմնական միջոցների շրջանառության հաշվետվություններ 39) Ստանում է հիմնական միջոցների մաշվածության տեղեկանքներ 40) Ներկայացնում է «ՀԾ»–ի Բանկ-հաճախորդ մոդուլը և նրա նշանակությունը 41) Կատարում է Փաստաթղթերի փոխանակում Բանկ-հաճախորդ համակարգում 42) Ներկայացնում է «ՀԾ>>–ի Առևտուր և Վաճառատեղ մոդուլները և նրանց նշանակությունը 43) Ներկայացնում է հաշվապահական հաշվառման վարման «1Օ» ավտոմատացված համակարգը 44) Կատարում է կազմակերպության հիմնական միջոցների տեղեկատուների ստեղծում և խմբագրում 45) Ստանում է հիմնական միջոցների շրջանառության հաշվետվություններ 46) Ստանում է հիմնական միջոցների մաշվածության տեղեկանքներ 47) Ստանում է աշխատավարձի հաշվարկ՝ հաշվետվություններ 48) Ստանում է եկամտահարկի և սոցապահովության հաշվետվություններ 49) Ստեղծում է Ֆինանսական և այլ հաշվետվություններ «10»–ով 50) Կատարում է Փաստաթղթերի փոխանակում Բանկ-հաճախորդ համակարգում:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Մասնակցին կտրվի գործնական առաջադրանք, որի տվյալներով պետք է 8x061 ծրագրով կազմի աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրի տվյալներ, կատարի ուղղումներ ու լրացումներ աղյուսակում, ներկայացնի հաշվարկների կատարման մեխանիզմը 8x061 կիրառական ծրագրում՝ թվաբանական և տրամաբանական ֆունկցիաներ: Ներկայացնի հաշվապահական հաշվառման վարման «<Ծ» ավտոմատացված համակարգը, ստանա աշխատավարձի հաշվարկ՝ հաշվետվություն, ստանա եկամտահարկի և սոցապահովության հաշվետվություններ <<ՀԾ»–ով: Ներկայացնի հաշվապահական հաշվառման վարման «1Ը» ավտոմատացված համակարգը, ստանա հիմնական միջոցների շրջանառության հաշվետվություններ և հիմնական միջոցների մաշվածության տեղեկանքներ «1Շ»–ով: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե մասնակիցը հիմնականում ճիշտ է կատարում առաջադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, թեմայի հետ կապված համապատասխան փաստաթղթեր: Մեթոդական ցուցումներ գործնական աշխատանքի վերաբերյալ, տեղեկատու նյութեր, համակարգիչ, պրոյեկտոր:
ՈՒսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական պարապմունք՝ 64 ժամ

Հավելված 2

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«Հաշվապահ» մասնագիտության մասնագիտական ուսուցման մոդուլային ծրագիր

N	**Մոդուլի անվանումը**	Գործնական պարապմունքների (այդ թվում՝ արտադրական աշխատանքային) նորմատիվային ժամերը	Տեսական պարապմունքների (այդ թվում՝ արտալսարանային) նորմատիվային ժամերը	Ընդամենը
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
	Հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ընթացակարգերը	30	30	60
	Փաստաթղթավորում և հաշվապահական հաշվառման վարում	30	30	60
	Հիմնական միջոցների, պաշարների հաշվառում	30	30	60
	Դրամական միջոցների հաշվառում և դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառում	20	20	40
	Սեփական կապիտալ: «Եկամուտների և ծախսերի հաշվառում»	30	30	60
	Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառման մեջ. Excel, 1C, ՀԾ ծրագրեր	64	6	70
	Ընդամենը	230	180	350